ԵԴ2/4440/02/26
(ՎԴ/4509/05/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26 մայիսի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Արման Թովմասյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/4440/02/26 (ՎԴ/4509/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Հ.Վ. և Ա.Վ. ներկայացուցիչը 2026 թվականի մարտի 19-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 2152-Ա որոշման հիման վրա օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքի

միջոցով Հ.Վ. և Ա.Վ.՝ վերջիններիս հետ առուվաճառքի պայմանագիր կնքելով, օտարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին[1]:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի մարտի 28-ի որոշմամբ Հ.Վ. և Ա. Վ. հայցադիմումը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ այն դատարան է ներկայացվել սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ, իսկ հայցվորի կողմից չի ներկայացվել միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին:

3. Հ.Վ. և Ա.Վ. ներկայացուցիչը 2026 թվականի ապրիլի 10-ին կրկին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 2152-Ա որոշման հիման վրա օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Հ.Վ. և Ա.Վ.՝ վերջիններիս հետ առուվաճառքի պայմանագիր կնքելով, օտարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին[2]՝ զուգահեռ ներկայացնելով միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին[3]:

4. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին[4]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան[5]:

6. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի մայիսի 12-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

---

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 5-32:
[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 69-95:
[3] Տե՛ս դատական գործը, թերթեր 58-64:
[4] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-4:
[5] Տե՛ս դատական գործը, թերթեր 100-106:

7. Թիվ ԵԴ2/12604/02/25 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ մերժել է Հ.Վ., Ա.Վ. ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարել հարկադրելու պահանջի մասին հայցադիմումի ընդունումը՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Հայցվորներ [Հ.Վ. և Ա.Վ.] ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի՝ խնդրելով հարկադրել Երևանի քաղաքապետարանին՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 2152-Ա որոշման հիման վրա օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել հայցվորներ [Հ.Վ. և Ա.Վ.] համապատասխանաբար վերջիններիս հետ կնքելով առուվաճառքի պայմանագիր: (…)*

Հայցադիմումում նշված պահանջն իր բնույթով հանրային իրավահարաբերություններից բխող պահանջ է, վերաբերում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմնի՝ Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական ակտի ընդունմանը, պարունակում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների տարրեր, որոնց առկայության պայմաններում էլ հայցապահանջը ենթակա չէ քաղաքացիական դատավարության կարգով քննության (…)»[6]:

8. Թիվ ԵԴ2/12604/02/25 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Հ.Վ. և Ա.Վ. վերաքննիչ բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Գ]ործով ներկայացրած հայցադիմումով հայցվորները խնդրել են «հարկադրել Երևանի քաղաքապետարանին Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի 2152-Ա որոշման հիման վրա*

[6] Տե՛ս դատական գործը, թերթեր 42-44:

օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել [Հ.Վ. և Ա.Վ.]՝ համապատասխանաբար վերջինիս հետ կնքելով առուվաճառքի պայմանագիր»:

(…) [Գ]ործով վեճը ոչ թե Երևանի քաղաքապետի 27.05.2011թ. թիվ 2152-Ա որոշման կատարման շրջանակում քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու, այլ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված՝ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 35-րդ կետի համաձայն ինքնակամ կառույցը և դրա համար առանձնացված հողամասը ձեռք բերելու առաջարկ ներկայացնելու գործողության իրավաչափության շուրջ է: Այս վեճը լուծելու համար դատարանը պետք է կիրառի ոչ թե քաղաքացիաիրավական կարգավորումները, այլ «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի և Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված՝ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի այն դրույթները, որոնք վերաբերում են ինքնակամ կառույցի և դրա համար առանձնացված հողամասի գինը որոշելուն: Ի տարբերություն քաղաքացիաիրավական բնագավառի, որտեղ օտարվող գույքի գինը որոշում է օտարողը՝ իր հայեցողությամբ, ինքնակամ կառույցի օրինականացման հարաբերություններում այս հարցը կարգավորված է հանրային-իրավական նորմերով, որոնց շրջանակում իրավահարաբերության մասնակիցները ազատ չեն և կաշկանդված են հատուկ կարգավորումներով»[7]:

9. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերին, 21-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 128-րդ հոդվածի 1-ին մասին, 436-րդ հոդվածի 1-ին մասին, 437-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ

[7] Տե՛ս դատական գործը, թերթեր 49-56:

Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների «Գործի ենթակայության վերաբերյալ վեճը լուծելու մասին» 2025 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանը գտնում է, որ քննարկվող վեճը հանդիսանում է քաղաքացիական իրավունքից ծագող վեճ, որի լուծման կարգը նախատեսված է քաղաքացիական իրավունքի կարգավորումներով, ուստի սույն գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին (…)»*[8]:

10. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 52-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ, ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 13-ի թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գտել է, որ հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը վերապահված է քննության ՀՀ վարչական դատարանին՝ նշելով հետևյալը. *«(…) 1. Երևանի քաղաքապետարանը հանրային իշխանական լիազորությամբ օժտված պետական մարմին է,*

2. համայնքային սեփականություն համարվող գույքի օտարումը պետական, մարմնի՝ Երևանի ավագանու բացառիկ իրավասությունն է՝ այսինքն՝ վերջինս ունի հանրային իշխանություն, իսկ այդ իրավունքն իրացնում է այդ իշխանությամբ օժտված լինելու արդյունքում,

[8] Տե՛ս դատական գործը, թերթեր 1-4:

3. այդ գործարքը բխում է գործադիր-կարգադրիչ գործառույթից՝ որպես պետական մարմին վերապահված լիազորությունից. այդ լիազորությունը վերջինս իրացնում է հանրային իրավահարաբերություններում՝ այսինքն՝ վերջին է այն միակ պետական մարմինը, ում օրենքով տրվել է նման իրավասություն,

4. Հայցվորը վիճարկում է Պատասխանողի անգործությունը, այսինքն՝ այդ փաստերի համատեքստում Դատարանն արձանագրում է, որ վեճի էությունն ամբողջությամբ համապատասխանում է հանրային իրավահարաբերություններին, ուստի ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանում (…)»[9]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ սույն գործի ենթակայության վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում, իրավաչափ է արդյո՞ք ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/4509/05/26 գործի վերահասցեագրումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

12. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. *«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (…)»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «*Մասնագիտացված դատարաններն են՝*

[9] Տե՛ս դատական գործը, թերթեր 100-106:

1) վարչական դատարանը. (...)»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...) »:*

13. Օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի պարտադիրության սկզբունքի արդյունավետ իրացումն իրավունքի գերակայության ցուցիչներից է և արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչը[10]:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», ի թիվս այլնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է *res judicata* սկզբունքը: Այս սկզբունքի պահանջն է, ի թիվս այլնի, վերջնական դատական ակտերի կատարման

[10] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի, երրորդ անձ «Վայկ Մետալ» ՍՊԸ գործով*, 2022 թվականի նոյեմբերի 04-ի թիվ ՎԴ3/0037/05/18 որոշումը:

ապահովումը: Դատական ակտը չկատարելու արդյունքում իմաստազրկվում է դատական պաշտպանության իրավունքը և իրավունքի գերակայությունը[11]:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին զեկույցի» (ընդունված 2011 թվականին մարտի 25-26) (CDL-AD(2011)003rev) 46-րդ կետի համաձայն՝ իրավական որոշակիությունը պահանջում է հարգել *res judicata* սկզբունքը, ըստ որի՝ ի թիվս այլնի, ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն:

Վճռաբեկ դատարանը, *Մելիք Մեսրոպյանի* վերաբերյալ որոշմամբ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ որպես իրավունքի գերակայության ապահովման կարևորագույն երաշխիքի, արձանագրել է հետևյալը. *«Դատական ակտի՝ օրինական ուժի մեջ մնալու պահից վերջնական դառնալու, և միայն բացառիկ դեպքերում դրա վերանայման հնարավորության, այսինքն՝ դատական ակտերի կայունության սկզբունքի հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո իրավունքի գերակայությունը պայմանավորվող պետությունների ընդհանուր նվաճումն է, որի հիմնարար կողմերից է իրավական որոշակիության սկզբունքը, ինչը պահանջում է, ի թիվս այլնի, որ եթե դատարանները վերջնականապես որոշել են որևէ հարց, նրանց որոշումը չպետք է կասկածի տակ դրվի*[12]*:*

Իրավական որոշակիությունը ենթադրում է հարգանք res judicata՝ դատական ակտերի կայունության սկզբունքի նկատմամբ:

(…) Իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացվել միայն պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների

[11] Տե՛ս, «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», 107-րդ կետ:
[12] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

դեպքում[13] *կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ*[14]*:*

(...) Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավական որոշակիության սկզբունքի առանցքային բաղադրատարրերից մեկը դատական ակտերի կայունության կամ res judicata սկզբունքն է, որի ցանկացած խախտում հանգեցնում է իրավական որոշակիության ոտնահարման և ուղղակիորեն ազդում իրավունքի գերակայության սկզբունքի վրա: Res judicata սկզբունքի հիմքում ընկած է իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության ու վերջնական լինելու, դրանց համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև դատարանների հեղինակությունը և վստահությունը դատական իշխանության նկատմամբ: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքից շեղումը կարող է արդարացված համարվել միայն օրենքով հստակ սահմանված, պարտադիր հանդիսացող էական և անհաղթահարելի հանգամանքների դեպքում: Նշվածը նաև բխում է Սահմանադրական դատարանի՝ թիվ ՍԴՈ-754 որոշման շրջանակներում ընդգծված՝ միջազգային իրավունքում հայտնի սկզբունքից՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), որն ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ մի շարք պետությունների՝ քրեական և քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը՝ որպես իրավական որոշակիության արդյունք, ենթակա է հարգանքի»[15]*:*

Մեկ այլ որոշմամբ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ. *«[Ի]րավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների*

---

[13] Տե՛ս, *mutatis mutandis,* Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Brumarescu v. Romania* գործով 2001 թվականի հունվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 28342/95 , կետեր 61-62, *Ryabykh v. Russia* գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 52854/99, կետեր 51-52:

[14] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xheraj v. Albania* գործով 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37959/02, կետեր 51-52:

[15] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մելիք Մեսրոպյանի* վերաբերյալ գործով 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԵԷԴ/0040/01/12 որոշումը:

(անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը»[16]*:*

Վճռաբեկ դատարանը, *Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների* քաղաքացիական գործով կայացրած որոշման շրջանակներում անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին, արձանագրել է հետևյալը. *«[Մ]րցար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի:*

Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մաս է իրավունքի գերակայությունը, որի հիմնարար հայեցակետերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն inter alia պահանջում է, որ դատարանի կողմից որևէ հարցի կապակցությամբ կայացված վերջնական դատական ակտը կասկած չհարուցի (տե՛ս Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը, գանգատ թիվ 28342/95, կետ 61), միաժամանակ նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է res judicata սկզբունքի, այն է՝ դատական ակտերի վերջնական լինելու սկզբունքի պահպանում»[17]*:*

14. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ Հ.Վ. և Ա.Վ. հայցադիմումի ընդունումը մերժվել է[18],

---

[16] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մաժելա և Նունե Հարությունյաններն ընդդեմ Բեգլար Մկրտումյանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ԵԱԴԴ/0913/02/13 որոշումը

[17] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների ու մյուսների* գործով 2009 թվականի փետրվարի 13-ի թիվ ԱՐԴ/0062/02/09 որոշումը:

[18] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

- ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 20-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ[19],

- Հ.Վ. և Ա.Վ. ներկայացուցիչը 2026 թվականի մարտի 19-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 2152-Ա որոշման հիման վրա օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Հ.Վ. և Ա.Վ.՝ վերջիններիս հետ առուվաճառքի պայմանագիր կնքելով, օտարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին[20],

- ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի ապրիլի 17-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ քննարկվող վեճը հանդիսանում է քաղաքացիական իրավունքից ծագող վեճ, որի լուծման կարգը նախատեսված է քաղաքացիական իրավունքի կարգավորումներով[21],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի մայիսի 5-ի որոշմամբ գտել է, որ հայցվոր կողմը վիճարկում է պատասխանողի անգործությունը, այսինքն՝ վեճի էությունն ամբողջությամբ համապատասխանում է հանրային իրավահարաբերություններին, ուստի ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանում և գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկել է ՀՀ Վճռաբեկ դատարան[22]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն գործով առկա է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 20-ի օրինական ուժի մեջ մտած որոշում, որտեղ անդրադառնալով խնդրո առարկա՝ գործի

[19] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[20] Տե՛ս սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը:
[21] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[22] Տե՛ս սույն որոշման 5-րդ և 10-րդ կետը:

ենթակայության հարցին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ հարցը կարգավորված է հանրային-իրավական նորմերով և անհիմն է ներկայացված պահանջը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա լինելու մասին բողոքաբերի պնդումը: Արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԴ2/12604/02/25 քաղաքացիական գործով կայացրած՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտը չի բողոքարկվել և օրինական ուժ է ստացել:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում գտնում ենք, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով արդեն իսկ քննարկման առարկա է դարձել և լուծվել սույն գործի ենթակայության հարցը, որի պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով նախատեսված՝ գործերի ենթակայության (ընդդատության) վերաբերյալ վեճերի լուծման գործիքակազմը գործադրվել չէր կարող: Հետևաբար, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ սույն գործի ենթակայության (ընդդատության) վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում, ՀՀ վարչական դատարանն իրավասու չէր հայցադիմումի պահանջն իրեն ընդդատյա չլինելու հիմքով թիվ ՎԴ/4509/05/26 գործը վերահասցեագրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում ենք, որ Հ.Վ. և Ա.Վ. ներկայացուցչի հայցի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/4509/05/26 (ԵԴ2/4440/02/26) գործը պետք է ուղարկել ՀՀ վարչական դատարան:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/4440/02/26 (ՎԴ/4509/05/26) գործն ըստ Հ.Վ. և Ա.Վ. հայցի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 27-ի թիվ 2152-Ա որոշման հիման վրա օրինականացված ինքնակամ շինությունը և դրանով

ծանրաբեռնված հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Հ.Վ. և Ա.Վ.՝ վերջիններիս հետ առուվաճառքի պայմանագիր կնքելով, օտարելուն պատասխանողին պարտավորեցնելու պահանջի մասին, ուղարկել ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ